

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 54/1

5 նոյեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Մեդիտեք> ՍՊԸ ներկայացուցչի 01.10.2013 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 28.09.2012 թ-ի թիվ 1011780/1 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասության սահմաններում <Մեդիտեք> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 54.069.054 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի վերաբերյալ հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.06.2013 թ-ի նիստում քննարկվել է <Մեդիտեք> ՍՊԸ 15.05.2013 թ-ի թիվ 15 գրությամբ բերված բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 29/7 որոշումը, որի համաձայն ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով, <Մեդիտեք> ՍՊԸ 15.05.2013 թ-ի թիվ 15 գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Հարկ է նշել նաև, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ 30.04.2013 թ-ի թիվ 1011780/1 ակտը վերացնելու պահանջի մասին 01.07.2013 թ-ին հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան: Հայցադիմումն ընդունվել է վարույթ և հերթական նիստը տեղի է ունենալու 14.11.2013 թ-ին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի հետևյալ հոդվածների դրույթները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի համաձայն, դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Իր հերթին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. <Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է>:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ըստ էության կիրառելի են վերը նշված օրենսդրական նորմերի դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Մեդիտեք> ՍՊԸ ներկայացուցչի 01.10.2013 թ-ի գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 10.06.2013 թ-ի թիվ 29/7 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. <Մեդիտեք> ՍՊԸ ներկայացուցչի 01.10.2013 թ-ի գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ